

ԱԶԳԱՅԻՆ ՄԻ Ի ՄԱՍՍՈՒԱ

ԵՒ

ԵՐԻՏՐԵԱՆ ԾԽԱԳԱՆԻԿ



ՄԱՍՍՈՒԱՅԷ (յԱփրիկէ) յունիս 28ի առ մեզ հասած Ափրիկէ իտալական թերթին մէջ կ'ընթեռնումք հետեւեալ ուրախական լուրը .

« ԅակովբ Սէկիւիան, հանճարեղ և գործունեայ (հայագգի) արուեստագէտն ի Մասսուա, ընդունեցաւ իտալիոյ մարտից նախարարութենէ արքունի մենավաճառը, իւր սեփական երեք տեսակ ծխազլանիկներու, որք ի Մասսուա այժմ մասամբ, իսկ ժամանակաւ ամբողջապէս տեղացի, այսինքն՝ երկրորեան ծխախոտով պիտի պատրաստուին. առաջիկայ նաւով պիտի մեկնին առաջին հակերն դէպ յիտալիա .

Մ'ենք տեսանք և փորձեցինք այդ երեք տեսակ ծխազլաներ .

ա. տեսակ. — Մասսուա ոսկեդրոշմ

բ. — Մասսուա կապուշուկ

գ. — Գիւնդա կապուշուկ

Գեղազիտական նկատմամբ Պր. Սէկիւեան կարող է բարձրել իւր տրգիւնքը. օրինակի համար, ի գործածելով ընտրելագոյն թուղթ մը, գրողովելով անոնց վերայ աւելի պարզ և արուեստագիտական կնիք մը, առանց բազմաթիւ տառերով խճողելու, միանգամայն փոքրիկ փոփոխութիւն մի ընելով՝ այսինքն է՝ սակաւ մի կարծ և աւելի թանձր շինել գլանիկներն . իսկ տեսակին որակութեան մասին ըսելու բան մի չունինք, վստայի

ամենալաւ են, և ապահով ենք՝ որ ծուխ արտոժողաց շատ հաճելի պիտի անցնի » :

Որչափ որ ուրախալի է այս լուրս, սակայն ոչ է այնչափ գոհացուցիչ մեղի. ուստի աւելի որոշ և ստոյգ ծանօթութիւն մը տալու համար պր. Սէկիւեանի անձին վրայ, պատշաճ կը դատուիք յաւելուլ մեզմէ մի քանի տող ևս մեր ընթերցողաց, մանաւանդ ու մանց փափաղը լրացնելու համար :

Պր. Յ. Սէկիւեան, ծննդեամբ Պարտիզակցի, իւր ուսման ընթացքը կատարեց՝ տեղւոյն Ազգային վարժարանին մէջ՝ ընդ տեսչութեամբ Է. Վ. Դուրեանի. դեռ ևս պատանի հասակէն մեծ յաջողակութիւն ցոյց կու տար բնական և թուաբանական գիտութեանց, և քիչ ատենէն այնչափ յառաջեց՝ որ 1885 սեպտեմբերին նոյն Ազգային վարժարանին մէջ ուսուցիչ կարգուեցաւ նոյն գիտութեանց :

1887ին հրաժարեցաւ ուսուցչութեան պաշտօնէն՝ և նոյն տարւոյն փետր. 6ին մեկնեցաւ Պարտիզակէն ի Մասսուա, ուր իւր հայրենակից Մկրտիչեանցի (կողկոյեան) և անոր ընկերաց վաճառատան մէջ սկսաւ աւանդակալի պաշտօն վարել, քսան տարեկան Գիշ ժամանակէն իւր աշխուժութեամբն և ճարպիկութեամբ՝ յիշեալ վաճառատան ընդհանուր փոխանորդութիւնն ստացաւ, բայց ոչ ընդ-

երկար. վասնզի Հապեշիստանի քաղաքական անկման հետ առեւտուրն ևս դադարելով, ստիպուեցաւ գլխաւորապէս ծխախոտի գործով զբաղիլ. բայց միանգամայն ձեռքէ չի թողուց ուսական ալիւրի^(*), մետաղներու և հիւսկէն ապրանքներու վաճառականութիւնն:

Իւր գլխաւոր զբաղմունքն է, ինչպէս ըսինք, արեւելեան կամ թուրք ընտիր ծխազլանիկներ արտադրել, և գրեթէ երկու տարի է՝ որ ծխազլանիկ պատրաստելու համար առանձին գործատուն մը հաստատած է. որ և ի հեճուկս Յոյն վաճառականաց՝ առաջին տեղին բռնած է և միշտ տեղական կառավարութեան վստահութիւնը և համակրանքը կը վայելէ:

Ի սկզբան Պր. Սէկիւլեան, Մաքսային մասնաւոր միտերանոցի առանձնաշնորհն ընդունելով, ծխախոտն թուրքիայէն բերել կու տար ուղղակի. սակայն յետոյ ի նկատի առնելով մարսին սղութիւնը, կը խորհի ճար մը գտնել այս անպատեհութեանս առաջն առնելու համար: Օր մը ի Գինդա երթալով, որ քաղաքէն 10 ժամ հեռի և ծովէն 800 մետր բարձր մի գիւղ է, կը տեսնէ անդ որ իտալացի մշակ մը իւր արտին մէջ վիրգիլիսա կոչուած տեսակէն ծխախոտ տնկած է. այն ժամանակ քննելով և տեսնելով տնկին զօրաւոր աճումն, կլիմային բարեխառնութիւնն, հողին պարարտութիւնն և անձրեաց կանոնաւոր դալն նոյեմբեր—մարտ ամսոց մէջ, իսկոյն կը գրէ ի Պարտիզակ իւր ընտանեաց, որպէս զի նիկոմիդիոյ գաւառին՝ խեօտէն և Օվաձոնս գիւղերուն արտադրած ծխախոտի հունտերն իրեն յղեն. ինքն թէպէտ ունէր վիրգիլիսա, Սօրօ, Բրազիլիսա, Ավանա և Արեւելեան կոչուած տեսակաց սերմիկներն, սակայն ասոնք ծխազլանիկի յարմար չէին գար:

Սակաւ ժամանակ յետոյ ստանալով

իւր խնդրած հունտերը, իտալացի մշակներու հետ գաշնակցելով և գրամով ևս օգնելով՝ 3 հարիւրակալի չափ ծխախոտ տնկել կու տայ փորձի համար, և գրեթէ մեծաւ մասամբ կը յաջողի: Իտալացի մշակք գիրքն ի ձեռին ունելով հանդերձ՝ չէին գիտեր ծխախոտի հաստուննայէն վերջ չորցընելու, գոյն տալու և հակի վերածելու եղանակն, որով ստացուած բերքը կը կորսուէր՝ փոշի դառնալով. ուստի այս անպատեհութեանս առաջն ևս առնելու համար, Սէկիւլեան բոլորովին այլապէս կը մտածէ և կը գործէ. այսինքն է՝ ի գործ կը դնէ իւր հայրենեաց՝ Պարտիզակի՝ ծխախոտի պատրաստութեան եղանակը, որ է՝ հասուն տերեւները փնջիկ փնջիկ ընել և ստուերի մէջ դնել մի քանի ժամ, (ի Պարտիզակ և ի Գաւալա 2 օր), որով լեմմինի գոյն կը ստանան տերեւներն. ապա ասեղէ անցնելով շարքը ընել և արեւու տակ չորցնել, և թողուլ որ գիշերուան ցօղն ևս վրայն իջնէ, և այսպէս՝ կը ստանար բաց կարմիր, կարմիր, միջագոյն դեղնագոյն տերեւներ, նման Պաւսա Բիշրսիձան, Քաւառն Սամսոն ծխախոտներու:

Ահա սոյն եղանակաւ գոհացուցիչ արդիւնք կը ստանան իտալացի մշակքն. վասն զի բաց ի ծխազլանիկի անյարմար ծխախոտէն՝ 17 կենտինար (1700 հզգրմի չափ) ծխախոտ կը բերեն իրեն, որ բաւական բան ըսել է: Պր. փրանքետտին՝ զաղթականութեան նախկին պաշտօնեայն իսկ իւր բրած բազմաթիւ փորձերով չէր յաջողած մի հարիւրապարտմօ՝ ծխախոտ հաւաքել, հակառակ տունկիկ զարմանալի աճման, որոյ պատճառն է անշուշտ՝ չը գիտնալն՝ չոր օդի ժամանակ արեւեւ տակն կերպով խոնաւութիւն տալ տերեւոյ՝ կակուղ մնալու համար, վասն զի այսու իսկ յաջողած էր Պր. Սէկիւլեան:

Այժմ կը խորհի ջրոյ փոշիացու.

ցիւ մեքենայ մի բերել տալ, վաճառի
այրեցեայ գետնային տակ գտնուելով՝
չափազանց խոնավ տեղ, չափազանց
այլ չոր ու կ'ընէ:

Պր. Սէկրիւնի այս տարուան
տաքացած ծխախոտն նոր բան մ'ըլ-
լալով գաղթականութեան մէջ, կաւա-
վարութիւնն շատ գոհ աչօք կը նայի
իւր վրայ, վաճառի իրմով ծխազլա-
նիկի պատարանութիւնն տեղեյն ա-
րուեստներէն առաջին կարգի տեղը
բռնեց և շահագործութիւնն ալ՝ առ-

եւտրական մի մեծ ճիւղ դարձաւ.
և այս պատճառաւ է որ կուսակալին
միջնորդութեամբ ծխազլանիկներուն
իտալիա ներածման միջնորդէն ըն-
դունեցաւ. կառավարութիւնն խոս-
տացած է այժմ իրեն ուղած դայտա-
վայրը տալ ծխախոտի մշակման համար:
Պր. Սէկրիւնի խորհրդականն ան-
գամ է առեւտրական սենեկին, և հո-
գարարձու՝ յոյն գաղութին, ի մասին
եկեղեցական մատակարարութեան ի-
բրև անգամ արեւելեան եկեղեցւոյ:



ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԻ ՄԷՋ



Խմբագրատան մի մէջ նստել է քառասունամեայ
մէկը, քիսազոյն, կարճահասակ, կոյր դէմքով և
մտրուօք, կիսավակ աչքով, որ կարծես հագիւ ալ-
քին ժայռով կ'ուզէ ակնարկ մը տալ իւր դիմացը
պատահողին: Շրթանցը վրայ — որ հագիւ կ'ընէ
պերեւելչներու տակէն — միշտ կ'ես ժիծաղ մը կայ,
իւր քնադրոսքեան (caractère) յատկանիշը: Իւր
նստելու և գրիչը շարժելու կերպէն կը գոչակեն
քեզ զայն յոյրոյրիկ ուլիկ՝ աննշան մտոր մ'ըլլալու
է. այլ անցեալ մ'ունենցիր է, — գոր այժմ փնտռե-
լու հետ է... ձանապարհաց վրայ՝ քայլելու մի-
ջոց. — ներկայապէս խմբագիր է, մեր գրագի-
տաց այն դասուն պատկանող, որունց միակ նպա-
տակն է գրել: Ճիշդ նոյն պահուն, երբ գրագիր է
նա իւր քերթին մէջ կարելու յաւելուածներ... յի-
շոցներ կցելու առոր դեմ՝ իւր յրագիրը
կանգնելու դիտմամբ, պատանի մի՝ փափաքելով
յրագրութեան ասպարիսին մէջ նետուիլ՝ ներս կը
մտնէ, ինքզինքը ասպարիսիքէն համար որ ընդու-
նոյն իրար յօդուածագիր իւր քերթին խմբագրու-
թեան մէջ ՝ զոչաց երկուքին մէջ հետեւեալ խօսակ-
ցութիւնն կ'ըլլայ:

ԽՄԲԱԳՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻ

ԽՄԲԱԳՐ. — Ի՞նչ կը հրամայես, Պարոն. կարճ
կապէի՞ր խնդրեմ՝ ժամավաճառ չընէիր
զես, Թերթիս մէջ մի քանի կարելու յա-
ւելուածներ ընկերա զբաղած եմ. չի
սեռար դուրս գալաւոգաց և ընթեր-
ցողաց բազմութիւնը՝ որոնք անհամբեր
կը սպասեն ինձի:

ՊՏՆ. — Ներեցեք, Պ. Խմբագիր, եկեր եմ

գլուխնիդ ցաւցնելու. բայց մի վախճի՝
անգին ժամանակնիդ չեմ վատնել, եր-
կու բառ է ըսելիքս: Կարելի էր որ
զես ալ ընդունէիք իբրև անգամ կամ
ընկեր Ձեր խմբագրութեան մէջ:

ԽՄԲԱԳՐ. — Այդ գովելի փափաք մ'է, Պարոն,
սակայն մեծ բանց մը կայ... ունիս ար-
դեօք Թերթիս պահանջած յատկու-
թիւնները և պայմանները:

ՊՏՆ. — Ունիմ Թէ չունիմ՝ չեմ յիշեր հի-
մակ, վերջը կ'ըսեմ Ձեզի այդ բանը.
բայց կընար սպասով ըլլալ որ պիտի
գոհացնեմ Ձեզ:

ԽՄԲԱԳՐ. — Խօսքերդ կշռելով ըսէ, Պարոն.
ինքզինքդ Սրեկիքի կամ Մասիսի խմբ-
ագրատանը կը կարծես. գիտցիր որ
ես քելով գոհ չեմ ըլլար:

ՊՏՆ. — Այդ բանը գիտնալու համար է,
Պ. Խմբագրատան, որ լեցուն ինչպի-
տապարով եկեր եմ Ձեզի ներկայանա-
լու:

ԽՄԲԱԳՐ. — Ի՛նչ, հիմակ հարցունեմքուս ուշ
գիր. ուր ըրեր ես հայերէն լեզուի և
գրականութեան ուսումը:

ՊՏՆ. — (Կարմրելով և գրեթէ դողդալով —
անդուշտ խմբագրին ազդած պատկառաւ-
քէն և սևոր հեգնելի ժպիտէն — կը պա-
տասխանէ). Ա. Ա. վարժարանին մէջ:

ԽՄԲԱԳՐ. — (Քննիծաղ մը յրթանց վրայ, որ չգի-
տես քի յիշ կը նշանակէ, յետ վայրկեան
մի յանդ, կ'ըսէ). Դատ ուրախ եմ այդ
մասին. զի ես ալ նոյն վարժարանին
մէջ ըրեր եմ իմ նախնական ուսումն,